

Ալեաց ցասուքն արգելուլ.
Եւ կ'ուխտէ որ ժանտ հովերուն
Մատուցանէ զոհ պատարուն
Մի ոսկեղջիւր պարարտ ցուլ,
Խոր անդընդոց Աստուածուհեաց
Եւ Աստուածոց բարձրութեան
Կը պաղատի որ իւղ թափեն
Ալէկոծեալ ծովուն վրան:

Ականջ դիւր իմ աղաչանաց,
Սըրահներէդ դուրս ել կանաչ,
Լեկոթիադ երանեալ.
Որ նաւորդները ամայի
Ջըրոց մէջ փոթորիկի
Ազատելով երեցար:
Տո՛ւր անոր քողդ սրբազան
Խորհրդաւոր հիւսուածքով.
Ձան կըրողը ալեաց վէճն
Պիտ' դուրս ելլէ ապահով:

Եւ կը լսեն վայրագ հովերն
Կը բարձրանան այգուն ձիերն
Հորիզոնէն վեր' երկրին:
Խաղաղ իր տեղը վաղեմի
Ծոփն հայելոյ պէս կը հոսի,
Օղն ու ջուրը կը ժպտին:
Աւիքներն ալ մեղմ կը բախին
Ժայռին վրայ եղբրաց,
Եւ խաղալով մօտ կը բերեն
Մարդու դիակ մը ծովափանց:

Այո՛, ան է. հոգին տուած
Սակայն չըթած չէ իր երգմանց.
Իսկոյն զանի կը ճանչնայ:
Ո՛չ մի գանգուտ նէ կը բառնայ,
Ո՛չ արցունքի մ' կաթիլ կ'իյնայ...
Յուրա, յուսահատ կը յառի:
Անմըխիթար խորն ամայի
Կը նայի և եթերին,
Եւ հուր մ'ազնիւ կը շառագնի
Վրայ դժգոյն երեսին:

Ձեզ կը ճանչնամ, վեհ զօրութիւնք,
Խառն կ'ուզէք ձեր իրաւունք,
Անողոր էք ու դաժան:
Ընթացքըս շուտ աւարտեցի,

Երջանկութիւնը վայելցի
Բախտ ունեցայ անմահն:
Մինչ կ'ապրէի, նուիրեցի
Ձիս քեզի զերդ քրմուհի.
Իբր ուրախ զոհ կը մեռնիմ ես,
Ափրողիտէ թագուհի:

Եւ զգեստովը իր թռչուն
Հոսանքներուն մէջը ծովուն
Բերդին ծայրէն կը նետուի.
Սուրբ դիակներն' հեղուկ վայրաց
Կը զըլորէ մէջը Աստուած՝
Անոց շիրիմն ինք կ'ըլլայ:
Արդ զոհունակ իր աւարէն
Ուրախ սրտով կը մեկնի
Եւ անըսպառ թափէ կուծէն
Իր գետն որ ճիշդ կը հոսի:

Քրեկալուրէ Թրգմ. Մ. Ա. ՄԵԼԻՔՈՆ
ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱԿԻ ԴԻՒԱՆԸ

Վերջին ամառը մեր վաղեմի ազնիւ
բարեկամներէն մէկը կրկին զբաղեցուց մեզ
Նիշահփուրցի խայամի քառակներուն հար-
ցերով: Ինչպէս յայտնի է խայամապաշ-
տութեան համահարակի նման բան մը
բռնկեր է որոշ Անգլիական շրջանակնե-
րը: Խայամ կանառներ, ցլուպներ (Clubs)
և անոր քառակներու թարգմանութիւն-
ները հետզհետէ կը ծագին, կը բուսնին: Իմ
բարեկամն ալ յԱնգլիա գտնուելով Հայե-
րէն է թարգմանի խայամի քառակները
տարբեր և աւելի հարազատ ըմբռնուե-
լով Եւրոպական հասկեցածէն: Քանի մը
կետերու վրայ միանգամայն նոր ըմբռնու-
ներով և նոր տեսակետով խօսելու է ան-
շուշտ ապագային: Զուգադիպութիւնը մեզ
միևնոյն ատեն դէմ առ դէմ բերաւ Քու-
չակի Դիւանի հետ և անոր ընթերցումը
մեզ համար գիւտ մը, յայտնութիւն մը
եղաւ հայ զբաղանկութեան մէջ: Արշակ էֆ.
Զօպանեանի ըննական ուսումնասիրութիւ-
նը լրջութեան մէջ կը գտնենք:

Քուչակ իրօք բանաստեղծ մըն է և մեր մէջ ամենաարարձ զիրքը անորն է, գերազանցօրէն բարձր է բոլոր միւս ազգային ճերթողներէ: Դեռ նա լուրջ և ջերմ ուսումնասիրութեան պէտք ունի: Անա միւր առաջին տպաւորութիւնները զոր կը ներկայացնենք Քազմովէպի ընթերցողներուն:

Մեր նպատակ է ընդարձակել Քուչակի ընթերցողները և անոր մթին կէտերը լուսաբանել, վերացական և ընդհանուր փառաբանութենէ՝ և հիացումներէ կը խորշնք — անհունօրէն և գերազանցօրէն — և գործնական ձևով կը խնդրենք Քուչակի Գիւնար ձեռք առնուլ, Չօպանեան էֆ.ի վերջին բառարանը հետազօտել և «քառի մը — սակաւաթիւ — բառերու իմաստը որ մեզի անհրաժեշտ էր» որպէս Չօպանեան կը խոստովանի, մեզի հետ միասին ընենլ թէ ինչ ձևով կարելի է հասկնալ Քուչակի մութ կէտերը:

Քուչակ պարսկերէն ժողովրդական բանաստեղծութիւնները լսած է երբ վասնզի իր պարսկերէն բառերը ստէպ անոնց ձևով և անոնց ձայնաւոր նշաններով Հայերէնի կը փոխէ, երբեմն ալ հայկական նշաններով:

Չոր օրինակ ճոհար, պարսկական հրնչիւնով և անոնց բանաստեղծական երկրորդական նշանակութեամբ, նիհար, անբերայթ. «Ճոհար անձկանց ի վրայ» (Չֆ) ձիթի ուր նիհար ըսել է: Ճոհար ձևով (ժի) 86 և 89 մարգարիտ, զոհար, ըսել է: «մօյտան չարտախտ» ուր առաջին մէյտան պարսկերէն բառը փոխուեր է. իսկ երկրորդը բուն պարսկական նշաններով գրուած է:

Թարկ, հարիթ, խամազի, տաւապ, հաղ պարսկական ձևերը ունին, մինչդեռ չորսքեօշայ, կողմ, գուշէ, «Խըյմէթդ մարդ չի գիտի» (դէյմաթ), հիւքմ, փատիլահ, փաթիւալ, մշկին փարուարիշ (մէշքին), փարուարէշ, խուսպ (դամ ու զօսայ կամ զօպնօզօսայ) տաճկական ձև են ստացեր:

Չէնացայ (գիւն, փնա) դատրուած (դատ, կտոր), դաւտել (սխալ, շփոթութիւն), կու պատլէ (ձե) (կեղծ, շինծու), դաւտեցուցեր

(73) պարսկական կամ արաբական բաներ են որոնցմէ հայ բառեր է շիներ:

Քանի տեղ ալ յայտնի շփոթութիւն կայ: Կամ հեղինակն պարսկերէն գրել կարգաւ չէր գիտեր, միայն լսելով, ականջով բառերը սովորելով շփոթեր է, կամ օրինակողները բուն բառը չհասկցած իրենց խելքին փշածն գրեր են: Անա օրինակներ էլ 54. Ժիթ.

Տերտեր այս մեր շատ սիրուն, այն հոգի, ո՞նց ևս յիմացել, ուր տէրտեր բառը միանգամայն անտեղի է: Խեղճ տէրտեր մը զինքը անհեթեթ ապուշ, գիւրքի մը մէջ պիտի գտնէ հոս կասկածելի սիրոյ խնդիրներու մէջ: Բնագրի մէջ տէրտու կամ տէրտէ այսինքը ո՞ցաւ, աւազ, եղուկ, ձեն կար անշուշտ: Քուչակ էլ 58 ՀՐ. տէրտու դամ ձեւը ունի. կրկին ի Դիթ: Պարսից ամէն բանաստեղծ ալ ստէպ «տարտա» ե. զուկի և աւաղի մտքով ունի: Հաֆիզի «տարտա քէ ուշէ փանհան խահատ շոտ աշրարայ». Անի որ խորին խորհարդները պիտի յայտնուին, շատ ծանօթ խօսք է: կրկին, էլ 71, ձիթի.

Դեռ ի մուրած չէի հասել, նայ առին զան վարդն ի ձեռացս» ուր յայտնի է բոլոր պարսկական գրականութենէն, «մուրած» բառը մուրատ, նպատակ, պիտի ըլլայ: Ուս զանգատը և մուրատ բառի այս նշանակութիւնը ամէն պարսից գրող կըրկներ է:

Դարձեալ էլ 68. ձիթ. և 69 ձիթ.

«Պագիկ մը ճորով առնում ու մէկիկ մը սրտի կամով» և այլուր կրկին և կրկին ուր ճորով՝ զօռով ըսել է (ոյթ), զօռով ջորով, ճորով, հաւանական է այս շփոթման երեք աստիճանները ցոյց կու տան, այսինքն Հայկական և շփոթեր են ապա ջ գրեր ապա ձի վերածեր: Էլ 66 ձիթի. «Իմ տղայկութեան սիրած, 'ւ իմ հաւգար աշխհ հաւընած» ուր իսկ ձեւը աշխհ, աշխիւրջ կամ աշից զանազան ձևերէն:

«Տիֆարն ի ծուռն ի գրած» ձիթ «ճիշտ ձեւը տափտարն, հաշուի տետրակ, ճակատագիր, է: «գէտ ըզպարնոր» ձիթ կա-

քօռտառք աւելի բնական է. «դռանա հնդիկ» (Խ) ալ յայտնի է պրամա, պրամին հնդիկ է եղեր, էջ 66. ՃԺԲ.

Ով իմ եարիս պագ առնու, նա պակսի աղջկանցն ի լուսոյն՝ ուր ուղիղ ձեն աշկանցն (աշացն) է:

«Մէջկուսեղ է բարակ 'ւ երկան, ծրծե. բուռ մէջն կայ խայեալ» ՃԻԳ. ուղիղ բառը խոյ է եղեր ալ և տալին յանգաւոր, ծին կամ բիծ իմաստով» Խայեալ ուրիշ տեղ ֆուշակի մէջ ՃԽԹ 73 խայեալ, կասկած, ցնորք կը նշանակէ և հոս անխարմար է. ճիշտ բառը խալ է եղեր:

«Չպասարաթ ու խելք» 67 ճի պաւիրաթ պասիր, ուշիմութիւն:

Դրովան 66, ՃԺԺ. տօ'ա տա'ա աւոթքը ըսել է: Անդորո 'ւ անսպառ 74 ՃԺԺ. անթուր 'ւ անսպառ է՝ առանց սրի և առանց ասպարի.

Իմ կուլ ու մուրտ ու ճիհան 72 ճԽԶ մուրտ՝ մրտենի անտեղի է, երբեակն անհեթեթ, իսկ կուլ ու մուլ ու ճիհան, վարդ զինի և աշխարհ, սովորական. պարսիկ ապրիլ սիրող բանաստեղծներու պաշտած երրորդութիւնն է: Չահրա, 54, ՄԶ, ջառ բառն է, պահպանած ճրագ ըսել է: Հեռի քեֆինն ի քենէ. քաֆան՝ դիակի պատանք: Դարէդ ի վեր չորասաս 61 ՂԲ, զարէ. բան, տար՝ ծառի տունկի բոյն: Դարձայ մուճաւաթ բերի յերկնուցն սին կապեցի. 74 ճԻԲ. Էնարաթ՝ աղօթքի, ալաչանքի, ընդունին է. մուճաւաթ ձեն չգտայ. ուխտ, կրօնական իղձ ըսել կ'ուզէ:

«Չուներդ ալ իլ չարարիլ» Ժարուրի կամ վասմա դնելու գլանած Գործիքն միլ է պարսից մէջ. նոր ջուղայեցիք իյիկ կամ իյիք կ'ըսեն: Պագ տան ու պագ առնուն, ղօլայն էն մէկալ գիշերուն 52, ԽԶ. պարսից պոռոնգրաֆիկ մասնագէտներն բերդ, բաղը, բերդ առնուլ, բերդ քանդել, սս մերձեցման իմաստով ստէպ ունին: Յերէկ չէ պայօր տեսայ՝ խնձորի տալիկ մի հուսայ 64, ՃԺ. հուսայ հեսսէ՝ կորիզ, սերմ է, «սիպէ տալէկ» այսօր ալ խնձորի ամե. նաընտիր տեսակներէ մէկն է ի Թէհրան, Տալէքէ գիւղ մը գիտենք Ժարսի մէջ, սա.

կայն Թէհրանի մօտ տալիկ չունինք. իսկ այս անունով ընտիր խնձոր մը ունինք: Ասոնք ցոյց կուտան ֆուշակի խորին հրմտութիւնը Պարսից գրականութեան հետ: Վայրի (ուրիշ տեղ վարի) վարճինակդ եմ ես, արգելէ, ո՛ մարդ Թէ կարես 54 ՄԺ. վարճէսթան՝ ստէպ Թոչիլ է, վարճինակ՝ Թոչը կտող է:

Հիւանդն ի նաշին, նագին agonie հոգեվարք ըսել է, նաշ դիակ է. և հոս ամենեկին անյարմար: ֆուշակ՝ անշուշտ նագ գրեց, իսկ յետագայ ընդօրինակողները չհասկնալով նագ բառի գիտնական իմաստն, նաշի՝ դիակի փոխեցին զայն:

ֆուշակի ծանօթութիւնը պարսիկ ժողովրդական գրականութեան հետ խիստ ընդարձակ է եղեր. «Թէ նուշ Թէ շաքար» «Մոշն դեղ կ'ասեն ի ջերման» «Թափի երեսի ջրէն» (ՃԺԺ) հիւանդին ազին (ՃԺԶ) agonie, հոգեվարք, հիւանդի մօտ խնձորով երթալ (էջ 51 ԼԹ) և բառախաղեր որպէս էջ 54. ՄԵ ուր նշենի, նուշ, ա. նուշ, ամբաւ և նուշ ամեն ձեւերու վրայ կը պարէ. կրկին էջ 51. Չ Ա ուր աղուշ, մաղուշ, ասեմ Անուշ ձեւերն ալ մէջ կը բերէ, Հաֆիդ մը կամ խայեամ մը կը յիշեցնեն իրենց բոլոր չարածնի խաղերով: Դարձեալ տես էջ 77. ՃԻԵ հաւաս (հաւասար) հաւաս ունիս, խաֆաս կամ էջ 78. ՃՀ խամազ և դամգութիւն ձեւերու բառախաղերը Պարսից ազդեցութեան նշաններն են, կրկին տես ՀԷ, ԼԵ 90 ԼԶ. 90, ԼԷ. 90.

Պարսկական չարածնի խաղերով սովորական և առ երեսս անմեղ ձեւի ներքև ուրիշ երկրորդական թելադրութիւններով (double entente) լեցուն են քառեակները դիւանին մէջ. տես Գ. Դ. Է. ԿԻ. ՀԱ. Զ. ՂԲ. ՃԳ. ՃԶ. ՃԺԲ ՃԺԲ. ՃԻ. Լն.:

Պարսկական բանաստեղծներէ փոխ առած պատկերներն են շատ քառեակներ, ԺԲ, ԺԳ, ԺԸ. ԻԷ, ԼԲ, ԼԹ. ԽԱ. ԽԲ, ԿԹ, ԶԲ, Ղ, ՂԱ, ՃԻԲ, ՃԼԲ, ՃԽԶ, ՃԿԲ, ՃՀԲ, ԻԵ 88. ԽԲ 91 ԺԲ 93 Լն. Լն.:

Շատ հեղ փուչակ խայամին կը նմանի, աչա բուն խայամական քառակներ. Խ. (91), ԺԹ. (95) ԿԵ (96) ԿԶ (96) և ԺԳ (85) և ԿԵ, 96. Մահալաքս ի վար կուգի նա տեսայ չոր գանկ մի պառկած. Ոտքովս ալ թափալ տուի նա երեսս ի վար ծիծաղաց. Դարձաւ ու պատասխանեց՝ Յես գնա՛, կտրին շփացած, Երէկ քեզի պէս էի, յայտը գիս այս հալն է ձգած : — դարձեալ. — Եկին աւետիս բերին Աղամայ թէ՛ Նիստ և խնդա՛. Եղեմ դրախտէն էլար, պատճառ ո՞վ եղև մէկ ասա՛. Թէ՛ զօժն ու զԵւայ կ'ասեն նա պատճառ եղաւ աստաւնայ. Ես քեզ աստանայ եղայ, ինծի ո՞վ եղե՛ւ մէկ ասա՛ էջ 97. — Երբ կին տեսնում, ցանկանամ, դոխոց դուռն մօտենամ, Երթամ յանապատ կենամ, ո՛չ տեսնում, ո՛չ ցանկանամ :

Մեր հին գրականութեան մէջ ամենախոշոր դէմքը Բիւզանդացին է, իր շատ հետքերըրական և կենդանի պատկերներովն մեր նախնեաց կեանքէն : Բիւզանդացին խորենացիէն գերազանցապէս վեր և բարձր է :

Մեր միջնադարեան գրականութեան խոշոր դէմքը Քուչակն է, և Արշակ էջ. Զօպանեան իր բազմամեայ աշխատութեանց զլուսի գործոցը պիտի սեպէ սա դիւանի գիտոր մոռցուած մութ անկիւններէ : Քուչակի մէջ ղեռ եւս մթին մասեր շատ կան. հաւանականօրէն աղաւաղեալ պարսկական ձևեր են, որո՞հալ պէտք է և քնազրններուն հետ համեմատել զանոնք գտնելու : Այս աշխատութիւնը ապագային կը թողունք և կրկին ջերմապէս կը յանձնարարենք դիւանի ուսումնասիրութիւնը հայ հասարակութեան : Անոր կարգացողը իսկոյն կ'ըմբռնէ այն յատուկ պատճառներն որով աւնոր տպագրութիւնը և ծաւալումն մեր մէջ մինչև և վերջերս յետաձգուեր են : Մեր գրական տպագրութիւնները գրեթէ միշտ «մեծաւորաց հրամանով» են եղեր և փուչակ անոնց համար ընտրելի հեղինակ չէր կրնար սեպուիլ :

ՏՈՒՐ. ՊԱՅՆ

ՍԱԼՈՍՈՆ ՌԱՅՆԱԽ

ՈՐՓԷՈՍ

Սալոմոն Ռայնախ ամփոփած է այս ընտիր հատորիկին մէջ, մեծութեամբ՝ փոքր, բովանդակութեամբ՝ ամենակուռ, բոլոր կրօնքներու ընդհանուր պատմութիւնը՝ ծագումներէն սկսելով : Եւ իր նորահրեշտար այս գրութեամբը զորով կը կրէ իրեն յատուկ հայեցողութիւններուն, — անշուշտ վիճելի, — որոնք կազմուած են՝ իր՝ պիտի ըսէի զրեթէ, գիտական նիւթապաշտութեան կրօնական խնդիրներու մէջ : Հատորին Որփէոս անունը տուած է, արդարացնելով զայն անով որ Որփէոս՝ թէև առասպելական անձնաւորութիւն մը, որփէականութիւնը սակայն ոչ միայն զգալի գոյութիւն ունեցաւ, «թափանցեց խոր կերպով գրականութեան, իմաստասիրութեան և արուեստին մէջ հին աշխարհին, և աւնոնցմէ աւելի երկարակեաց եղաւ»... Եւ կեղեցկայ հայրերը համոզուած էին թէ Որփէոս աշակերտ եղած է Մովսէսի և իրեն մէջ նմարած են պատկերը կամ աւելի ճիշդ՝ նախակարը Յիսուսի, որովհետեւ ան ալ մարդկանց սովորեցնելու եկած ըլլալով՝ անոնց բարերարն ու զոհն եղած էր միանգամայն :

Յառաջարկէն իսկ՝ հեղինակը կ'իմացընէ թէ ինք միտք չունի, ինչպէս ընդհանրապէս ըրած են իր նախընթացները, Քրիստոնէութեան առանձին տեղ մը տալու, որովհետեւ ինք կրօնքներով կը զբաղի իբրեւ պատմիչ, ո՛չ իբրեւ շատագով, և զանոնք կը նկատէ միայն «անհնապէս հետաքրքրական արդիւնքներ մարդկանց և բնականութեան և անոնց բանին՝ դեռ տղայ հասակին մէջ» : Բայց, բնականապէս, բոլոր կրօնքներն ալ մեզ նոյն ոճով չեն շահագրգռեր. ուստի նա անոնց վրայ կը խօսի աւելի կամ նուազ ընդարձակօրէն, ըստ իրենց ունեցած կարեւորութեան,